ՀԿԴ2/0003/01/22
(ՏԴ/0038/01/22)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 սեպտեմբերի 2022 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՀԿԴ2/0003/01/22 (ՏԴ/0038/01/22) քրեական գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի ապրիլի 4-ին ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զ.Զաքինյանի կողմից որոշում է կայացվել թիվ ՏԴ/0038/01/22 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2022 թվականի ապրիլի 8-ին նշված քրեական գործով կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում:

2022 թվականի օգոստոսի 30–ին ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զ.Զաքինյանի կողմից որոշում է կայացվել թիվ ՏԴ/0038/01/22 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Գնել Հրաչիկի

Ստեփանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179–րդ հոդվածի 3–րդ մասի 1-ին կետով, ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ըստ ընդդատության ուղարկելու մասին:

2. Քրեական գործին շնորհվել է թիվ ՀԿԴ2/0003/01/22 համարը և 2022 թվականի սեպտեմբերի 7-ին այն մակագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանին:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ:

3. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանը 2022 թվականի սեպտեմբերի 9-ին որոշում է կայացրել ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին:

Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 13-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Գնել Խաչիկի Ստեփանյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. *«[Գնել Ստեփանյանը] «Կամոյլ» ՍՊԸ–ի տնօրեն Կամո Մելքոնյանի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 145-Ա հրամանով 2020 թվականի սեպտեմբերի 10-ից հանդիսանալով նշված ՍՊԸ–ին պատկանող Դիլիջան քաղաքի Կամո փողոցի 131/4 հասցեում գործող բենզալցակայանի ղեկավար, թիվ 109 պայմանագրով ստանձնելով իրեն վստահված արժեքները պահելու, մշակելու, ծախելու նյութական պատասխանատվություն, 2020 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2021 թվականի մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում հանձնման ընդունման ակտերով ստանալով վառելիք և իրեն վստահված գույքի նկատմամբ ունենալով օրինական տիրապետման իրավունք, պայմանագրային հարաբերություններով օժտված լինելով բենզալցակայանի դրամաշրջանառության նկատմամբ համապատասխան լիազորություններով, նշված ժամանակահատվածում վաճառած վառելիքից գոյացած ընդհանուր գումարի 5.007.000 ՀՀ դրամը չի ուղղել հիշյալ ՍՊԸ–ի ֆոնդին, իսկ 4.036.560 ՀՀ դրամի համարժեք վառելիքի տարաներում գտնվելու առկայության վերաբերյալ ՍՊԸ–ին*

ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող հաշվետվություններ և այդ կերպ հափշտակելով իրեն վստահված գույքը՝ ընկերությանը պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս»[1]*:*

5. ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ջ.Ջաքինյանը 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ արձանագրել է. *«2021թ. հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին:*

Նույն օրենսգրքի 483 հոդվածի 23-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների բացառության մասով, 261-րդ հոդվածի 7-րդ մասի և 262-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերի (վարույթների) վերաբաշխումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ԱԺ-ի կողմից 14.04.2021թ. ընդունված ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ սույն հոդվածի 20-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (…) կոռուպցիոն հանցագործությունների

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 161:

վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ:

Թիվ ՏԴ/0038/01/22 քրեական գործով Գնել Խաչիկի Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նշված հոդվածը համապատասխանում է 2021թ. մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 256 հոդվածի 3-րդ մասին, որը ներառված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված 1-ում, այսինքն՝ ընդդատյա է հակակոռուպցիոն դատարանին:

Հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ դատավորներն արդեն ստանձնել են դատավորի պաշտոնը: ՏԴ/0038/01/22 գործով դեռևս անցում չի կատարվել դատաքննության փուլ, հետևաբար այն ենթակա է վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանի քրեական մասնագիտացմամբ դատավորներին:

Այսպիսով՝ դատարանը գտավ, որ սույն գործն ընդդատյա չէ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, և այն պետք է ուղարկել հակակոռուպցիոն դատարան՝ ըստ ընդդատության (…)»[2]*:*

6. ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) մեղադրյալին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներքում բացակայում է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված «պաշտոնեական դիրքն օգտագործել»–ու եղանակով ուրիշի գույքը*

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 101:

յուրացնելու հանցակազմի, ինչպես նաև 2022թ–ի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետով սահմանված «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործել»-ու եղանակով վստահված գույքը հափշտակելու հանցակազմի նկարագրություն, այսինքն նկարագրական մասում գոյություն չունի ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա կոռուպցիոն հանցանքը նկարագրող փաստական հանգամանք»:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանը նշել է նաև, որ *«Գ.Ստեփանյանը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի սուբյեկտ չի հանդիսանում: (...)*

Ամփոփելով նշվածը՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և ՀՀ հակակոռուպցիոն դատարանների միջև առկա է ընդդատության մասին վեճ, որի լուծումը վերապահված է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին (...)»:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

7. Նախնառաջ հարկ է նշել, որ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանը որոշում է կայացրել ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին: Մինչդեռ, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները կիրառվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահի նշանակման պահից: Մինչև նշված հոդվածի համապատասխան կարգավորումը կիրառվելը Վճռաբեկ դատարանում ստացված ընդդատության մասին համապատասխան վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից՝ համապատասխան որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

ժամկետում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման կայացման օրվա դրությամբ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահը նշանակված չէ, ուստի ընդդատության մասին վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից:

8. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. թիվ ՀԿԴ2/0003/01/22 (ՏԴ/0038/01/22) քրեական գործն ընդդատյա է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, թե՞ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]:

11. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս*

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[4]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

14. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, բացառությամբ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա գործերի, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ:*

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

15. Թիվ ՀԿԴ2/0003/01/22 (ՏԴ/0038/01/22) քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զ.Զաքինյանն իր վարույթում գտնվող թիվ ՏԴ/0038/01/22 քրեական գործն ըստ ընդդատության ուղարկել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան այն պատճառաբանությամբ, որ Գ.Ստեփանյանին

առաջադրված մեղադրանքը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներառված է նույն օրենսգրքի հավելված 1-ում՝ կոռուպցիոն հանցանքների ցանկում, այսինքն՝ ընդդատյա է հակակոռուպցիոն դատարանին[6]:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանը, չհամաձայնվելով նշված դիրքորոշման հետ, գտել է, որ թիվ ՀԿԴ2/0003/01/22 (ՏԴ/0038/01/22) քրեական գործի քննությունը պետք է շարունակվեր Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ Գնել Ստեփանյանին առաջադրված մեղադրանքում բացակայում է «պաշտոնեական դիրքն օգտագործելու» կամ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու» եղանակով վստահված գույքը հափշտակելու հանցակազմի նկարագրությունը[7]:

16. Հարկ է արձանագրել, որ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ անմիջականորեն գործող պաշտպանության իրավունքի երաշխավորման նպատակով դատարաններն ամբաստանյալի նկատմամբ գործի քննության ընթացքում չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների շրջանակից: Ավելին՝ դատարանը՝ որպես արդարադատություն և ոչ թե քրեական հետապնդում իրականացնող մարմին, սահմանափակված է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալով: Այսինքն՝ քրեական գործի քննության ընթացքում դատարանը չի կարող քննարկման առարկա դարձնել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք արտացոլված չեն եղել անձին առաջադրված մեղադրանքում[8]:

17. Սույն գործի նյութերի, մասնավորապես՝ Գ.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունից երևում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված և «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» N 6 հավելվածով

---

[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Կարեն Կունգուրցևի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԼԴ/0141/01/14 որոշումը:

նշված հափշտակության՝ «պաշտոնական դիրքն օգտագործելու» հատկանիշը Գնել Ստեփանյանին մեղսագրված չէ[9]:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է արձանագրել, որ կաշկանդված լինելով գործը բացառապես անձին առաջադրված մեղադրանքի սահմաններում քննելու օրենսդրական պահանջով, Գ.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպման պայմաններում սույն գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է, հետևաբար թիվ ՀԿԴ/0028/01/22 (ԱՎԴ/0095/01/19) քրեական գործն ընդդատյա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Այսպիսով, հիմք ընդունելով 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում եմ, որ Գ.Ստեփանյանի վերաբերյալ քրեական գործն ընդդատյա է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՀԿԴ2/0003/01/22 (ՏԴ/0038/01/22) ըստ մեղադրանքի՝ Գնել Հրաչիկի Ստեփանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179–րդ հոդվածի 3–րդ մասի 1-ին կետով, ընդդատյա է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

[9] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը: